



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1946 թվի սեպտեմբերի 25-ին, Սպենդիարովի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի Պետական թատրոնում բացվեց Հայաստանի Սովետական գրողների երկրորդ համագումարը:

Համագումարին մասնակցում էին 58 պատգամավոր վճռական ձայնի իրավունքով: Սովետական Միության Գրողների վարչությանից՝ Միության քարտուղար, ակնավոր գրող ընկ. Նիկոլայ Տիխոնովի գլխավորությամբ համագումարին, որպես հյուրեր, մասնակցում էին արձակագիր Սերգեյ Բորոդինը, բանաստեղծ Սերգեյ Շերվինսկին, բանաստեղծուհիներ Վերա Չվյագինսկան, Մարիա Պետրովիխը, քննադատ և «Դրուժբա նարոդով» ամսանախոյ խմբագիր Արկադի Դեկը, թատերագիր քննադատ Յոան Ալթմանը, Սովետական Գրողների Միության վարչության ազգային գրականությանընկերության ընկ. Սեմյոն Եվզենկո, «Լիտ. գաղետա»-ից՝ Պիլսոնը, էստոնիայից՝ Գրողների Միության նախագահի տեղակալ, բանաստեղծ Մարի Ռաուդը, Լենինգրադից՝ բանաստեղծներ Անատոլի Չևիլիսինը, Վադիմ Շեֆները և գրականագետ, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Կամար Գրիգորյանը, Վրաստանից՝ ակնավոր գրամատուղ, ՍՍՄԽ Գերագույն Սովետի դեպուտատ Շալվա Դադիանին, ակադեմիկոս, Ստալինյան մրցանակի լաուրեատ Դեոդոտ Լեոնիձե, վիպասան Կոնստանտին Դամասխուրդիան, բանաստեղծ Ալիո Մաշադիլին, Վրաստանի Գրողների Միության Հայկական սեկցիայից՝ բանաստեղծ Ռուբեն Աղաբաբը, արձակագիր Մերուն Թորգոմյանը, Բենիկ Սեյրանյանը, Մարո Զուրաբյանը, Մկրտիչ Ասլանյանը, Վահան Ասրյանը, Վարդան Սիմոնյանը, գրամատուղ-թարգմանիչ Սուրեն Ավչյանը, քննադատ Միհրան Քրաջյանը, Ադրբեջանից՝ բանաստեղծներ Վարսենիկ Աղասյանը, Համո Սահյանը, Սամվել Գրի-

գորյանը, Դանիել Գրիգորյանը, արձակագիր Մարգար Դավթյանը, գրամատուղ Արշավիր Դարբին: Արտասահմանի հայ առաջագիմ գրողներ ու գրականագետներ՝ Ամերիկայից՝ բանաստեղծ Կարապետ Սյուտալը, Իրանից՝ «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարադաշը, բանասեր-քննադատ Արամ Նրեմյանը, բանաստեղծ Հովհաննես Ղուկասյանը, Բելյուսից՝ բանաստեղծ Վահե Վահյանը, «Ժողովուրդի ձայն» թերթի խմբագիր, հրապարակախոս և գրական քննադատ Հովհաննես Աղբաշյանը, Կիպրոսից՝ բանաստեղծ Սմբատ Տիրունյանը, Ֆրանսիայից՝ բանաստեղծ և Օմար-Խայամի լավագույն թարգմանիչ Արամ Զարգը, արձակագիր Զարեհ Որբունին, վիպասան Լևոն Մեսրոպը:

Ամբողջ դահլիճի բուռն օվացիայի տակ համագումարը պատվավոր նախագահության մեջ ընտրեց Համկ(բ)Պ Կենտկոմի Բաղբյուրոյի կազմը՝ մեծ Ստալինի գլխավորությամբ, ինչպես նաև ընկ. Գր. Հարությունյանին:

Համագումարում գործարար նախագահության մեջ ընտրվեցին ընկ. ընկ. Զ. Իրվորյանը, Ավ. Իսահակյանը, Ն. Տիխոնովը, Ս. Կարապետյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Արագին, Գ. Սարյանը, Հր. Գրիգորյանը, Գ. Բորյանը, Շ. Դադիանին, Սիրասը, Գ. Լեոնիձեն, Գ. Լևոնյանը, Կ. Սիտալը, Ա. Զարգը, Լ. Մեսրոպը, Խ. Մարգարյանը, Զ. Որբունին, Վ. Վահյանը, Հ. Աղբաշյանը, Մ. Ռաուդը, Ա. Չևիլիսինը, Ս. Տիրունյանը, Հ. Գարադաշը, Ա. Նրեմյանը և ուրիշներ:

Համագումարը բաց արեց Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահության նախագահ, Ստալինյան մրցանակի լաուրեատ, ակադեմիկոս Ավետիք Իսահակյանը, որը սրտագին ողջունելով համագումարի մասնակիցներին, իր ներածական խոսքում նշեց, որ երբ բարրաբա-

Ֆաշիստները հարձակվեցին մեր երկրի վրա, հայ ժողովուրդն անձնվիրաբար կռվեց հայրենիքի թշնամիների դեմ, իսկ նրա գրողները «հրեղեն խոսքերով երգեցին ու փառաբանեցին այն բոլոր վեհ զգացմունքները և բարձր գաղափարները, որոնց սիրուն մեր սքանչելի ռազմիկները գնում էին կռվի դաշտ, թշնամու դեմ մարտնչում և հերոսանում—այսինքն հայրենի հող, լեզու, նույնություն, ընտանիք, մայր, կին, երեխա. Սովետական Միություն. խրախուսում էին նրանց, գովաբանում նրանց սխրալի գործերը և անմահացնում նրանց հերոսական անձնագրհումը: Ապա անդրադարձավ նրան, որ աշխարհում ցրված գաղութահայությունը ևս անմասն չի մնացել Հայրենական պատերազմին. նա «գործով և սրտով մասնակցել է Հայրենական պատերազմին և երազել նրա հաղթանակը»: Այսօր այդ գաղութահայությունը վերադառնում է իր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան. նրանց թիվը հարյուր հազարներ է, միլիոն է, բայց Մայր Հայրենիք վերադարձել են մի քանի տասնյակ հազար: Նրանք բոլորը պիտի գան Հայրենիք և արտասահմանի հայ գրողները պետք է «աշակցեն ներգաղթի հաջողությանը: Նրանք պետք է տանեն գաղութահայերին այն խնդիրը պատգամը, որ Սփյուռքի բոլոր հայերը Սովետական Հայաստանի վաղվա քաղաքացիներն են: Մեր գրչակիցները պիտի երգեն ու արժարժեն սեր զեպի Սովետական Հայաստանը, բոլոր հայերի Հայրենիքը, պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելությունը, բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությունը այլասերումից: Նրանք պիտի կամուրջ դառնան տարածելու Սովետական Հայաստանի կուլտուրայի, արվեստի և գրականության արժեքները և ստեղծելու միասնական գրականություն՝ սովետահայ գրականության շուրջը»:

Ավ. Իսահակյանի քացման խոսքից հետո համագումարը լսեց Գրողների Միության պատասխանատու քարտուղար ընկ. Հ. Գրիֆորյանի զեկուցումը օրակարգի առաջին հարցի՝ «Սովետական հայ գրականությունը և նրա հետագա զարգացման ուղիները» թեմայի մասին:

Զեկուցողը մանրամասնորեն բնութագրեց սովետահայ գրականության զարգացումը ըստ ժամանակաշրջանների, սկսած նրա ծագումից մինչև մեր օրերը: Նա առանձնապես կանգ առավ Հայաստանի սովետական գրողների առաջին ու երկրորդ համագումարների միջև ընկած

մարների միջև ընկած ժամանակաշրջանի վրա:

Համագումարի սեպտեմբերի 26-ի առավոտյան և երեկոյան նիստերում լսվեցին Ֆիլոլոգիական դիտությունների դեկտոր պրոֆեսոր Մ. Մկրյանի «Սովետահայ գեղարվեստական արձակը և նրա զարգացման խնդիրները», ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Վարդազարյանի «Սովետահայ պոեզիան», Ս. Հարությունյանի «Սովետահայ դրամատուրգիան» և Դ. Դեմիրճյանի «Հայրենական մեծ պատերազմի գրականությունը» հարակից զեկուցումները: Իսկ սեպտեմբերի 27-ի առավոտյան նիստում լսվեց արվեստի վաստակավոր գործիչ Տ. Հախումյանի «Սովետահայ գրականության լեզուն» հարակից զեկուցումը:

Հարակից զեկուցողները մանրամասնորեն նկարագրեցին սովետահայ գեղարվեստական գրականության զարգացման էտապները, օրինակներով և փաստերով ցույց տվին նրա հուժկու աճը լեռնայան-ստալինյան ազգային քաղաքականության դրոշմի ներքո, պոեզիան, դրամատուրգիան անցել են սոցիալիստական ռեալիզմի մեթոդը տիրապետելու ոչ հեշտ ուղին, հարստացել են գաղափարապես և գեղարվեստականորեն: Սովետահայ գրականությունը Հայրենական պատերազմի տարիներին նոր ծաղկում ապրեց: Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գաղափարը փրկորդ պլանի վրա մղեց բոլոր մյուս խնդիրները, և մեր գրականությունը հուժկու ձայնով խոսեց սովետական հայրենասիրության, հայրենիքի նկատմամբ սովետական մարդկանց անհուն, անսահման սիրտ մասին: Սովետական Հայաստանի տնտեսության ծաղկումը չէր կարող չափազանցապես հայ գրական լեզվի զարգացման վրա: Այդ լեզվի հասունությունը, հարստությունը, նրա բարձր մակարդակն են վառ կերպով փկայում այդ տարիներին ստեղծված արձակ ու չափածո, խոշոր երկերը:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան նիստում լսվեց նաև Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մամիկոնյանի «Գրական քննադատության վիճակն ու խնդիրները» զեկուցումը:

Զեկուցողը նշեց, որ քննադատական աշխատությունների մեծ մասը նվիրված է հին, նախառևտյուցիոն հեղինակներին. սովետական գրողների ստեղծագործությունները դեռևս չեն գտնվում գրական քննադատության ուշադրության դաշտում:



և մենք հավատում ենք, որ արտասահման վերադառնալով Հայաստանի այս ծաղկման ու ճշմարտության մասին կատարեն ամենուրեք արտասահմանում, հերքելով զրպարտությանը, որպես վիճակներ ցրելով կեղծիքը և հոտ մղելով կատաղի հարձակումները»:

Նույն նիստում Վրաստանի Սովետական Գրողների Միության անունից ողջույնի խոսքով հանդես եկավ ընկ. Շալվա Դադիանին, որը խոսեց վրացի և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության, ժողայրթական դրականությունների կապերի, Մայթ-Նովայի, Գ. Սունդուկյանի, Հովհաննես Թումանյանի և մյուսների մասին: Նա նշեց սովետահայ դրականության նվաճումները և վստահություն հայտնեց, որ Սովետական Հայաստանի գրողները, իրագործելով ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի պատմական սրուշումները, ձեռք կբերեն էլ ավելի մեծ նվաճումներ:

Սեպտեմբերի 28-ին, առափոտյան և երեկոյան նիստերում, շարունակվեցին մտքերի փոխանակությունները:

Էստոնական գրողների կողմից ողջույնի խոսքով հանդես եկավ ընկ. Մարթ Ռաուդը. նա հիշեցրեց, որ հայ մեծ լուսավորիչ հաշատուր Աբովյանը սովորել է Տարտուի համալսարանում և որ էստոնիայում լավ ծանոթ են հայ դրականության նվաճումներին: Հազարավոր կիրումներով են բաժանում մեզ էստոն ժողովրդին Հայաստանից: Սակայն այս հեռավորությունը չխանգարեց, որ մեր ժողովուրդները դեռ անցյալ դարից ցուցատուրական կապեր հաստատեն: Տարտուի համալսարանի պրոֆեսոր Պարրուրը 1820 թվին գալիս է Հայաստան և էջմիածնում բարեկամանում հաշատուր Աբովյանի հետ, որը հետագայում դառնում է խոշորագույն հայ գրող:

«Սեր մայրենի լեզվով մենք կարողացանք կարգալ Երզնկացուն, հատվածներ Սասունցի Դավիթ» էպոսից, հայ ժողովրդական երգեր ու հեքիաթներ, հայ նոր դրականության կլասիկներ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և այլոց գործերը»:

Սեպտեմբերի 30-ի առափոտյան նիստում համագումարը ջերմորեն դիմավորեց Բեյրութի «Ժողովուրդի ձայն» թերթի խմբագիր Հ. Աղբաշյանին, որը ողջույնի փոսք ասաց Սիրիայի և Լիբանանի հայության անունից. «Պատմական եզակի համագումար մըն է ասիկա, —ասաց նա,—որովհետև կզուգարի պի արտաքին պայմաններու հարկադրանքին

տակ, դարերով իրարմե բաժնված հայ ժողովրդի երկու մեծ հատվածներուն՝ արևմտահայ և արևելահայ հատվածներուն, միակ հայրենիքի մը՝ Սովետական Հայաստանի մեջ համախմբվելու դործին: Պատմական եզակի համագումար մըն է ասիկա, որովհետև ասիկա հայ ժողովրդի ազգային միավորումի գործին զուգընթաց կձեռնարկե նաև Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայ գրականությունը միավորելու գործին: Ոչով պատահականության մը արդյունքը չէ արտասահմանեն հայ առաջադիմական գրողներու ներկայությունը սույն համագումարին, այլ հետևանք է պատմական իրողության մը՝ հայ ժողովրդի ազգային միավորումի իրողության. իսկ հայ ժողովրդի ազգային միավորման կարելիությունները ստեղծեց միայն սովետական իշխանությունը: Ահա թե ինչու համագումարի արտասահմանյան պատգամավորներս սրբադան պարտականություն կնկատենք Սփյուռքի հայության անունով խոր երախտագիտություն հայտնել ժողովուրդների մեծ բարեկամ և առաջնորդ ընկեր Ստալինին, որուն ազգային արդար քաղաքականության շնորհիվ արևելահայ ժողովուրդը երկու անգամ փրկվեցավ քնաշնչումի վտանգեն, իսկ Սփյուռքի հայությունը կփրկվի երկարամյա պանդուխտությունից»:

Համագումարը ողջունեց նաև գաղութահայ խոշորագույն գրող Կ. Սիտալը.

Նշելով որ հայ ժողովրդի վերելքը տնտեսության ու կուլտուրայի մարզում վիթխարի ու ապշեցուցիչ է, նա ասաց. «Ավելի քան 30 տարի ապրած լինելով կապիտալիստական աշխարհի ամենահզոր երկրում համարձակվում եմ ասել, որ Երևանի մշակույթային կյանքը իր բովանդակությամբ, իր արժեքով, իր ծավալով, ժողովրդական խավերում իր վայելած հսկա ժողովրդականության մը և ապա ուրույն բնութագրով շատ ավելի բարձր է կանգնած, քան կապիտալի մեծ Երկրի՝ Ամերիկայի մշակույթային կյանքը: Մինչդեռ մեծահարուստ Ամերիկայում մշակութի վայելքը վերնախավերին է պատկանում, Հայաստանի մշակույթի բոլոր պտուղները ժողովրդական բոլոր խավերի սեփականությունն են կազմում»:

Հոկտեմբերի 1-ի նիստում համագումարն անցավ օրակարգի երկրորդ հարցի քննարկմանը: «Հայկական արտասահմանյան արդի գրականությունը» զեկուցումով հանդես ե-

կալ Ֆիլիոպիական գիտությունների թեկնածու ընկ. Էդ. Թոփչյանը: Զեկուցման առթիվ բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Ն. Զարյանը, Դ. Դեմիրճյանը, արտասահմանյան առաջադեմ հայ գրողներ Լ. Մեսրոպը, Կ. Սիտալը, Հ. Գարագաշը, Վ. Վահյանը, Զ. Որբունին, Ա. Զարբը, Հ. Աղբաշյանը, Ա. Երեմյանը, Հ. Ղուկասյանը, Ս. Տիրունյանը:

Արտասահմանյան հայ գրականության ներկայացուցիչները ողջունելով Սովետական Հայաստանի գրողների երկրորդ համագումարը՝ հիացմունքով էին խոսում հայ ժողովրդի նվաճումների մասին 26 տարվա ընթացքում: Նրանք շնորհակալություն հայտնեցին կոմունիստական պարտիային և սովետական կառավարությանը համագումարի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն տալու համար և հույս հայտնեցին, որ շուտով բոլոր վտարանդի հայերը կվերադառնան իրենց հայրենիքը:

Այնուհետև համագումարը միաձայն Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ ընտրեց ավագ բանա-

ստեղծ, Ստալինյան մրցանակի լաուրեատ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ավետիք Իսահակյանին: Համագումարը ընտրեց Գրողների Միության վարչություն՝ 25 հոգուց բաղկացած: Լաված բոլոր զեկուցումների համար համագումարն ընդունեց ծավալուն բանաձևեր:

Մեծագույն ոգևորությամբ, դահլիճի բուռն ծափահարությունների տակ համագումարն ընդունեց ընկեր Ի. Վ. Ստալինին ուղղված ողջույնի նամակը, որի մեջ Սովետական Հայաստանի գրողները հավաստիացնում են պարտիային և կառավարությանը, մեծ Առաջնորդին, որ պատվով կկատարեն Համ Կ(բ)Պ Կենտկոմի որոշումները և կստեղծեն ստալինյան մեծ դարաշրջանին արժանի ղեկարվեցողական գործեր:

Համագումարը նաև ողջունելի նամակ ընդունեց ուղղված Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանին:

Հոկտեմբերի 1-ին համագումարն ավարտեց իր աշխատանքները:

